№ 216 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 1898 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 № 216

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1899** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. և մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արմատները խոր են թաղված. Ընկածի մատաղածութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ալէքսանդրօպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պրոֆէսօր Բէլլը. Գնդապետ Պիկարի գործը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայերէն նոր գրականութեան խընդիրներ։

ԱՐՄԱՏՆԵՐԸ ԽՈՐ ԵՆ ԹԱՂՎԱԾ

Անցեալ անգամ խօսելով Կովկասում տիրող աւազակութիւնների մասին, մենք այն միտքը յայտնեցինք, որ պ. Եանօվսկու առաջարկած միջոցը՝ կրթութեան և դպրոցների միջոցով արմատախիլ անել աւազակութիւնները, թէև գեղեցիկ միջոցներից մէկն է, բայց միակը չէ։ Եւ վերջապէս դա մի միջոց է, որ իր գեղեցիկ պտուղները կարող է տալ միայն ապագայում, տասնեակ տարիներից յետոյ։ Աշխատենք բացատրել մեր միտքը և ցոյց տալ, թէ կայ և ուրիշ միջոց, աւելի անմիջական։

Մենք տեսանք, որ մամուլի «յայտնի» մասի մէջ անհեթեթ դատողութիւնների, ծակ փիլիսոփայութիւնների և շովինիստա-հայրենասիրական տաք մտածողութիւնների մի ահագին կոյտ է բարձրացել Կովկասեան աւազակութիւնների հարցի շուրջը և դժուար է ասել, թէ ի՞նչն է գերակշռում այդ կոյտի մէջ—յիմարութի՞ւնը, թէ ուղիղ հասկացողութիւնը։ Այդ դատողութիւնների մէջ, ըստ երևոյթին, փոքր ի շատէ լուրջ առարկութեան ազդեցութիւն կարող է թողնել մեր երկրի պայմաններին անծանօթ մարդկանց վրայն, թէ աւազակութեան պատճառները նոր ժամանակի տնտեսական պայմաններն են, ուրեմն նրանք կապ ունեն հողային հարցի հետ։ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան պաշտօնական օրգանը ասում է, թէ «գիւղական հողերի պակասութիւնը, հողային անկազմակերպութիւնը, հողերի սահմանաչափութեան բացակայութիւնը աւազակութեան գոյութեան բազմաթիւ պատճառներից մէկն են կազմում»։ Դժբաղդաբար կան անձինք, որոնք կարծում են, թէ Կովկասում տիրող աւազակութեան պատճառը պէտք է որոնել միայն տնտեսական պայմանների և հողային կազմակերպութեան մէջ, որ իրական և պատմական հիմք չունի։ Եւ ահա՛ ինչու։

Աւազակութիւնները, ինչպէս նախորդ յօդուածում ևս յիշեցինք, ծաղկած էին մեր երկրում և նախկին ժամանակները, երբ տնտեսական պայմանների և հողային խնդրի մասին ոչ մի հասկացողութիւն չը կար, երբ հողի պակասութիւն չը կար։ Ներկայումս էլ, ինչպէս յայտնի է, աւազակների մեծ քանակութիւնը տալիս է այն դասակարգը—թուրք բէգերի և աղալարների դասակարգը, որի ձեռքին է գտնվում հողերի մեծ մասը, որը ամեն միջոց և հնարաւորութիւն ունի անձնատուր լինել հողագործական խաղաղ և արդար պարապմունքներին. այդ դասակարգը ոչ միայն ինքը ներգործական դեր է խաղում աւազակութիւնների մէջ, այլև հովանաւորում, խրախուսում է և շահագործում աւազակներին։ Այդ իրողութիւնը անհերքելի է։ Եւ դեռ նորերս Գանձակի պ. Նահանգապետը հարկաւոր համարեց հրաւէր կարդալ կալուածատէր բէգերին և հասկացնել, թէ նրանց պարտաւորութիւնն է հալածել աւազակներին և ոչ թէ հովանաւորել։ Միւս կողմից այս ևս անհերքելի իրողութիւն է, որ աւազակութիւնը ամենից շատ զարգացած է մահմեդական ազգաբնակութեան մէջ և այդ ազգաբնակութեան այն մասի մէջ, որ փոքր ի շատէ նիւթապէս ապահովված է։ Բուն հողագործ, իր սեփական աշխատութեամբ և ճակատի քրտինքով իր հացը վաստակող տարրի մէջ քիչ է զարգացած աւազակութիւնը։ Պարզ է, որ աւազակութիւնները այս դէպքերում ամենևին հողային պայմանների արդիւնք չեն։

Ուրեմն ինչի՞ արդիւնք են աւազակութիւնները։ Ընդհանուր, ամենաշատ տարածված կարծիքն այն է, թէ նրանք տգիտութեան արդիւնք են և այդ պատճառով դպրոցը ամենաազդու միջոցն է համարվում։ Այդ կարծիքը, ներկայի վերաբերմամբ, մասամբ միայն ճիշդ է։ Փաստ է, որ աւազակութիւններին մասնակցում են յաճախ այնպիսիները, որոնք դրագիտութիւն են սովորել նոյն իսկ միջնակարգ դպրոցների ստորին դասարաններում...։ Ոչ, պատճառը աւելի խոր է։ Ո՛վ լաւ ուսումնասիրել է մեր երկիրը, շփվել է ազգաբնակութեան հետ, նա կարող է առանց տատանման վկայել, որ աւազակութիւնների պատճառը պէտք է որոնել մահմեդական ազգաբնակութեան աշխարհայեացքի, դարաւոր կրթութեան, ցեղական աւանդութիւնների մէջ, որոնց հիման վրա աւազակութիւնը ղօչաղութիւն, ասպետութիւն է համարվում, և ոչ յանցանք. աւազակութիւնը այն ասպարէզն է, ուր բէգը, աղան կարող է ցոյց տալ իր առնական քաջագործութիւնը։ Վերջապէս մահմեդական ազգաբնակութեան առանձնաշնորհված դասակարգը պարսկական և թիւրքական տիրապետութեան ժամանակ այնքան ընտելացել է հեշտ եղանակով, առանց աշխատելու, հարստահարութեան և կեղեքումների միջոցով հարստանալու գաղափարին, որ դարերի ընթացքում այդ սովորութիւնը արիւն և մարմին է դարձել. իսկ այդ սովորութիւնը արմատախիլ անելու համար հարկաւոր է, որ ամբողջ սերունդներ ենթարկվեն կրթական յեղափոխութեան, որ կրթութիւնը, ուսումը, այն էլ լուրջ և ոչ մակերևոյթային ուսումը, ամենալայն ծաւալով տարածվի ազգաբնակութեան մէջ։ Տարրական և թերի կրթութիւնը անզօր է խոր, դարևոր արմատներ արձակած չարիքի դէմ մաքառելու։

Բացի այդ գլխաւոր պատճառից կայ և մի այլ, նոյնպէս էական պատճառ—արևան վրէժխնդրութեան սովորութիւնը, որ նոյնպէս խոր արմատացած է մահմեդական ազգաբնակութեան և կովկասեան մի քանի լեռնական ցեղերի մէջ։ Սպանութիւն դորա մի միջոց է, որ իր գեղեցիկ պտուղները կարող է տալ միայն ապագայում, տասնեակ տարիներից յետոյ։ Աշխատենք բացատրել մեր միտքը և ցոյց տալ, թէ կայ և ուրիշ միջոց, աւելի անմիջական։

Մենք տեսանք, որ մամուլի «յայտնի» մասի մէջ անհեթեթ դատողութիւնների, ծակ փիլիսոփայութիւնների և շովինիստա-հայրենասիրական տաք մտածողութիւնների մի ահագին կոյտ է բարձրացել կովկասեան աւազակութիւնների հարցի շուրջը և դժուար է ասել, թէ ի՞նչն է գերակշռում այդ կոյտի մէջ—յիմարութի՞ւնը, թէ ուղիղ հասկացողութիւնը։ Այդ դատողութիւնների մէջ, ըստ երևոյթին, փոքր ի շատէ լուրջ առարկութեան ազդեցութիւն կարող է թողնել մեր երկրի պայմաններին անծանօթ մարդկանց վրայն, թէ աւազակութեան պատճառները նոր ժամանակի տնտեսական պայմաններն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՆԴԻՐՆԵՐ

Ա. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

(Շարունակութիւն)

Ե. Ահա այսպէս հինգ տարիէն աւելի է, որ ընդդէմ Տ. Կարիէրի ջանացած էի հաստատել թէ ընդօրինակիչն՝ Փոքր Սոկրատն է, ընդօրինակիչ ոչ միայն Խորենացւոյ՝ այլ և ուրիշ զանազան հայերէն մատենագրութեանց, յորոց բընաւ ամենևին տեղեկութիւն չունէր գաղղիացի ուսուցչապետն։ Երկու ոսիններ էինք Տ. Կարիէր և ես, դատաւորն էր գիտնական աշխարհն։ Արդարութիւնն կը պահանջէր, որ ուսուցչապետը, վարդապետը և մագիստրոս՝ յետ լսելու զփաստս Տ. Կարիէրի՝ խուլ չմնային և իմ ապացուցմանց, նախ և յառաջ յանդիմանէին զիս որպէս ունայնախօս և ափիբերան ընէին, ու յետոյ հռչակէին թէ իրաւունքն Տ. Կարիէրի է, Խորենացի է բանաքաղն ի Փոքր Սոկրատայ յՈւթերորդ դարու։ Բայց, ինչպէս ըսի, ոչ ոք կարևորութիւն տուաւ իմ գրածներուս, ոչ ոք քննեց թէ «անապատի քարոզ»-իս անբաստանութեան համեմատ՝ Փոքր Սոկրատն ստուգիւ մինչեւ փոքր մարդ է, որ բաց ի Պատմութենէն Խորենացւոյ զողացած է շատ և շատ բան նաև ի Հին և ի Նոր Կտակարանաց, յԱգաթանգեղէ, յՆղիշէէ, ի Փարպեցւոյ, ի Յաճախապատում ճառից, այլովքն հանդերձ, մինչև անգամ ընդարձակ հատուած մի ի Վկայաբանութենէ Սրբոյն Մարկոսի Արեթուսայ եպիսկոպոսի [1]։ Ոչ ոք, կ՚ըսեմ, արժանի համարեցաւ զբաղել իմ յօդուածովս, և տեսանք ու լսեցինք այնպիսի նորօրինակ բան՝ որու ապաղայ դարերու Հայ մարդիկն պիտի չուզեն հաւատալ. տեսանք ու լսեցինք օտարազգի թերուս թերահմուտ հայագէտ մի պատգամներ որոտալ Հայոցս Գրականութեան և Պատմութեան ամենէն ծանր խնդրոց վերայ [2]), և թէ ինչպէս իւր պատգամներն գովութեամբք, չնորհաւորութեամբք և չնորհակալութեամբք ընդունուեցան ի Հայ գիտնականաց։ Յայսցանէ մին, Լազարեան Ճեմարանի հայերէն լեզուի ուսուցչապետն, Տ. Գրիգոր Խալաթեանց, նշանաւոր ծառայութիւն մի ևս մատոյց Տ. Կարիէրի, ի հաստատութիւն նորա կարծեաց՝ թէ Խորենացի օգտուած է ի Փոքր Սոկրատայ յՈւթերորդ դարու՝ նոր փաստ մի յառաջ բերելով։

Փոքր Սոկրատն 480—483 երեսներուն մէջ, ուր կը պատմէ զպատերազմ Թէոդոս Առաջին կայսեր ընդ Եւգենիոս բռնակալին, տասներկու ասացուածներ կը գործածէ. 1. Եւ խմբեցաւ պատերազմն. 2. Որ կոչի (Փռիգդոն). 3. Զաւրացեալ ի վերին (զաւրութենէն) զաւրք (թագաւորին). 4. Դարձուցանէր ի փախուստ. 5. (Բազում մահս և վիրաւորս առնէր ի) թշնամեացն. 6. Հողմ (ուժգին հարեալ) ընդդէմ. 7. Մինչև պարտեցաւ (բռնակալն). 8. (Հատին) զզլուխն (բռնակալին). 9. Եւ այնպէս (բարձաւ չարն ի միջոյ). 10. Եւ (եղև) խաղաղ(ութիւն զաւրացն և ամենայն աշխարհացն այնոցիկ). 11. Ոչ կարաց(եալ զերծանել ի հետամտիցն). 12. Սատակեցաւ չարն (չարիւ իւրով)։ Արդ՝ Տ. Խալաթեանց զայս տասներկու ասացուածս Փոքր Սոկրատայ կը գտնէ ճշդիւ ի նկարագրի պատերազմին Զիրաւայ զոր կը կարդանք առ Խորենացւոյ (Գ. լէ. 474—479), և կրսէ («Հանդէս», 1897, երես 293 ա). «Խորենացին... այլ աղբիւրների թվում (իմա՝ Գրիգորի Նազիանզացւոյ և Մակարայեցւոց գրոց)՝ օգտվում է և Փոքր Սոկրատի վերոյիշեալ տողերից՝ թեթև փոփոխութեամբ յարմարցնելով դոցա իւր պատմութեան արտաքին, ձևական մասերին։ Յետոյ կը դնէ զհատուածն Խորենացւոյ. 1. Եւ խմբեցաւ պատերազմն. 2. Որ կոչի (Զիրաւ). 7. Մինչև պարտեցաւ (երկրորդն Ամաղէկ). 6. Հողմ (սաստիկ) ընդդէմ (փչեալ). 4. Ի փախուստ դարձուցանէր. 3. Ի վերին (ազնվականութենէն) զաւրացեալ ...զաւրքն (Յունաց և Հայոց). 5. (Դիակամբք) թշնամեաց. 11. Ոչ կարաց (երթալ ընդ փախստեայսն). 8. (Եղ) ի գլուխ (Մերուժանայ). 9. Եւ այնպէս (սատակեցաւ չարն). 10. Եւ (յայնմ հետէ) խաղաղ(եցաւ երկիրն). 12. Սատակեցաւ չարն. ուր Վիքտոնականն յերես 277, և Լամբրոնացւոյ օրինակն ունին՝ Սատակեաց զչարն։

Տ. Խալաթեանցի դիտողութիւնն թէ Խորենացի «օգտվում է և Փոքր Սոկրատի վերոյիշեալ տողերից՝ այն ժամանակ միայն արդարացի կըլլար, եթէ Սքոլաստիկոսին յունարէն բնագրին մէջ միահամուռ գտնուէին Փոքր Սոկրատայ տասներկու ասացուածքն։ Մոսկուայի ուսուցչապետն չպարտէր չասանալ ըսելով՝ թէ Փոքր Սոկրատն «ներկայացնում է ըստ սովորութեան՝ իրեն յատուկ աննշան յաւելուածներ» («Հանդէս», 1897, 292 բ). քանզի այդ աննշան կարծեցեալ յաւելուածներդ են որ իսկոյն կը ժանեն զիմաստակն, զզոզոմելի թարգմանիչն, զդողն, զանաժամ և անպատկառ աւարառուն հայերէն մատենագրութեանց. հարկ էր որ Տ. Խալաթեանց նայէր ի յունարէն բնագիրն կամ ի Մեծ Սոկրատն՝ հաւատարիմ ներկայացուցիչ Սքոլաստիկոսին, և քննէր թէ ինչ է սորա ըսածն, և ինչ Փոքր Սոկրատայն։ Աւասիկ ես կը լեցընեմ ասա զպակասութիւն Տ. Խալաթեանցի։

1. Եւ խմբեցաւ պատերազմն. Մեծ Սոկրատն կ՚ըսէ «Եւ լինէր խառնակումն». 2. Որ կոչի (Փռիգդոն). այսպէս և Մեծն. 3. Զաւրացեալ ի վերին (զաւրութենէն) զաւրք (թագաւորին). Մեծն չունի այսպիսի բան. 4. Դարձուցանէր ի փախուստ. այսպէս և Մեծն. 5. (Բազում մահս և վիրաւորս առնէր ի) թշնամեացն. Մեծն չունի

[1]) Տես Փոքր Սոկրատ, երեսը 270—272, սկսեալ ի բանէն «Յայնժամ ժողովէր զամենայն զաւրս իւր» մինչև «Թագաւորեալ մեռաւ», տասնուվե՛ց տողք. համեմատէ Վաքը և Վկայաբանութիւնք Սրբոց, Ս. Ղազար, 1874, հատոր երկրորդ, երես 16, տողք 5—25։ Նմանապէս Փոքր Սոկրատայ ուրիշ ընդարձակ հատուած մի, երեսը 686—687, «Յետ այսորիկ վանականի երանելին Պրոկղ», երեսո՛ւն տողք, ի միասին հաշուելով և գծանօթութիւնն 1 յերես 687, բառ առ բառ ընդօրինակեալ է ի Կայսերական գրոց։

[2]) Թադէոս Առաքելոյն Հայոց քարոզութեան մասին՝ ահագին անդիտութիւն անդիտացաւ Տ. Կարիէր, զորմէ պիտի խօսիմ ուրիշ անգամ։ «Զո՞ր ինչ ասացից, և զո՞ր թողից»։

ծողը համոզված է, որ սպանվածի ազգականները անպատճառ վրէժխնդիր կը լինեն և որ իր մահը անխուսափելի է, ուստի նա աշխատում է, որ գոնէ իբրև զօչաղ մեռնի։ Վերջապէս աւազակութեան պատճառների թւում պէտք է ի նկատի ունենալ և մեր բանտերի, մանաւանդ դաւառական բանտերի կազմակերպութիւնը։ Մի որ և է թեթև յանցանքի համար այդ բանտերը մտնող թիւրք պատանիները դուրս են գալիս այնտեղից բոլորովին փչացած և արդէն պատրաստ՝ աւազակութեան համար։

Հարկաւոր է այս հիմնական պատճառների դէմ կռուել։ Այդ կռուի մասին մենք էլ մեր կարծիքը կը յայտնենք։

ԸՆԿԱԾԻ ՍՆԱՊԱՐԾՈՒԹԻՒՆԸ

—

Շատ օրեր չեն անցել այն ժամանակից, երբ ամեն անգամ, որ պաշտօնական, հրապարակական ճառերի մէջ խօսվում էր Թիւրքիայի մասին, միշտ արտասանվում էին «կազմալուծվող, քայքայվող պետութիւն» բառերը։ Եւ ոչ ոք, ոչ Եւրոպան, ոչ ինքը Թիւրքիան հարց չէր յարուցանում, չէր վիրաւորվում, թէ ինչու արտասանվում են այդպիսի բառեր։ Թէ Թիւրքիան կազմալուծվում է, քայքայվում է և ցրվում է դէպի անկումն, այդ հանգամանքը ոչ մի կասկածի չէր ենթարկվում։ Սակայն կազմալուծվող, քայքայվող Թիւրքիան յունական պատերազմից և մանաւանդ գերմանական կայսր Վիլհելմ II-ի այցելութիւնից յետոյ այնքան յանդուգն է դարձել, որ բողոքում է նոյն իսկ անորոշ ակնարկների դէմ։ Ցայտնի է, որ նոյեմբերի 9-ին, լորդ Սալսբիւրի մի ճառ արտասանեց, որի մէջ մի ակնարկ կար «անկման վիճակի մէջ գտնվող» պետութիւնների մասին։ Սուլթանը այդ ակնարկն ընդունեց, իբրև ուղղված Թիւրքիայի հասցէին, ուստի և յանձնեց Լոնդոնի իր դեսպանին բացատրութիւն պահանջել։ Ինչպէս հաղորդում է «Новости» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը, նրան յայտնեցին, թէ հաւանօրէն, բրիտանական առաջին մինիստրը, ի նկատի է ունեցել Սպանիան, Պորտուգալիան, գուցէ և Չինաստանը։ Սակայն յանկարծ Մանչեստրում լորդ Զեմբերլէն մի նոր ճառ արտասանեց, որի մէջ ասաց, թէ Սուդանի մի մասը և Եգիպտոսը գտնվում են մի քայքայվող պետութեան իշխանութեան տակ։ Այդ արդէն շատ պարզ ակնարկ էր Թիւրքիայի մասին, ուստի դարձեալ օսմանեան դեսպանին յանձնվեց վճռական բացատրութիւն պահանջել և բողոքել Զեմբերլէնի ճառի դէմ։ Լորդ Սալսբիւրին խուսափողական պատասխան տուեց և մերժեց հերքումն տալ, ինչպէս պահանջում էր դեսպանը։ Սուլթանը, որ առանց այն էլ շատ դժգոհ էր Անգլիայից, աւելի յուզվեց, երբ իմացաւ Լոնդոնի հեռագիրներից, թէ Վեստմինիստրի դուքսը խօսել է իր ճառի մէջ՝ «պատմութեան մէջ անօրինակ այն սճիրների մասին, որ գործել է սուլթանը, դառնալով տարիւր հազար իր հպատակների սպանութեան մեղսակից»։ Հէնց այդ ժամանակ անգլիացի թիւրքատեացները և Գիբրալտարի եպիսկոպոսը մի և նոյն մեղադրանքով հանդէս եկան սուլթանի դէմ։ Բացի դրանից Լոնդոնում դուրս եկան չորս բրոշիւրներ Անատոլիայի գործերի մասին, որոնց մէջ ապացուցանվում է, թէ Թիւրքիան իրան նպատակ է դրել կոտորել բոլոր հայերին և յայտնվում է, թէ նոր կոտորածները անխուսափելի են, որովհետև, իբր թէ, Ռուսաստանը դրդում է ասիական հայերին օսմանեան պաշտօնեաների և քիւրդերի դէմ։ Բ. Դուռը ենթադրում է, որ Լոնդոնում կազմակերպում են հայկական նոր ապստամբութիւն։ Սուլթանը նորից դիմեց լորդ Սալսբիւրիին, որը պատասխանեց, թէ շատ ցաւում է Վեստմինստրի դքսի ասածների մասին, որովհետև դուքսը վիրաւորել է ոչ միայն սուլթանին, այլ և կողմնակի կերպով նրա հիւրին ու բարեկամին՝ գերմանական կայսրին, բայց, դժբաղդաբար, ինքը Սալսբիւրին չէ կարող միջամտել այդ գործին, ի նկատի ունենալով, որ դուքսը մասնաւոր անձն է և կառավարութիւնն իրաւունք չունի արգելել մասնաւոր անձանց խօսել կամ գրել։ Այդպիսի պատասխան, ինչպէս ասում են, տրվել է և գերմանական դեսպանին, որ նոյնպէս բացատրութիւն է պահանջել դքսի արտասանած խօսքերի մասին։ «Անկասկած, ասում է թղթակիցը, հայոց հարցը նորից պէտք է ծագի։ Անգլիացիներն ու ամերիկացիները մըտադիր են միտինգներ սարքել սուլթանի և նրա բարեկամ գերմանական կայսրի դէմ։ Օսմանեան կառավարութիւնն, ի հարկէ, այդ առիթով չը ջաբերականներ կուղարկի իր դեսպաններին։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

—

Նոյեմբերի 14-ին

Մեծ ուրախութեամբ կարդացինք «Մշակի» № 205-ի մէջ, որ Լօռի գաւառի Շահնազար հայկաթոլիկ գիւղում բացված է ուսումնարան. աւելի ուրախ եղանք կարդալով, որ ժողովուրդը սիրով աջակցում է դպրոցի բացման, և թէ այնտեղի քահանայ հ. Սարգիս վ. Եաղըճեան իր տունը յատկացրել է դպրոցին։ Հ. Եաղըճեանի անունը ծանօթ է «Մշակի» ընթերցողներին։ Այդ մի և եռանդոտ հոգևորականի շնորհիւ Շահնազարցիները կարողացան իրար հետ համաձայնել և մի քանի տարի առաջ գնեցին վրաց իշխան Օրբելեանից Շահնազար գիւղը իր հողերով, անտառներով, ջրերով և մարգագետիններով։ Սեփական հողի շնորհիւ, այժմ Շահնազարցիները կարող են ազատ շունչ քաշել և իրանց քրտինքով վաստակած հացը լի առատ ուտել։ Հ. Սարգիս վ. Եաղըճեանի շնորհիւ գտնվեց գիւղում ապակու հանք, որը գիւղացիները որպէս հաստատի սեփականութիւն ծախում են ապակու գործարանատէր գերմանացի Ֆօն Կուչենբախին, որ իրանց գիւղից շատ հեռու չէ։

Հ. Եաղըճեան հայ-կաթոլիկ հոգևորականութեան մէջ առաջինն էր, որ հասկացաւ թէ ժողովրդի միակ փրկութիւնը մայրենի հողի մշակութեան մէջն է, իսկ ազգային ամենամեծ ֆակտորը մայրենի լեզուն է։ Երանի թէ մեր հոգևորականութիւնը օրինակ առնէր հ. Եաղըճանից և փոխանակ օրերը դատարկաբանութեամբ անցնելու, աշխատէր դպրոց բանալ մեր հայ-կաթոլիկ գիւղերում, ուր ժողովուրդը թաղված է տգիտութեան և աղքատութեան մէջ։ Բարի գործը չի մնայ առանց վարձատրութեան և բարի անունը չի մնայ առանց յիշատակի։

Շիրակեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ահա մի քանի ժանրամատնութիւններ «Պեստր» և «Եկատերինա» շոգենաւերի ընդհարման մասին, որ քաղում ենք «Чорном. Вѣст.» լրագրից. «Ուրբաթ, նոյեմբերի 20-ին, Բաթումից դուրս գնաց ռուսաց շոգենաւային ընկերութեան «Պեստրը» շոգենաւը դէպի Օդեսա։ Շոգենաւի վրա կային մօտ 300 ճանապարհորդներ։ Դիշերելով Փոթիում և ապրանք առնելով, «Պեստր» շոգենաւը շարունակեց իր ճանապարհը։ Երբ նոյեմբերի 21-ի դիշերվայ $2^1/_2$ ժամին «Պեստր» նաւը մօտենում էր Օչէմչիրին, նրա հանդէպ երևաց ռուսաց շոգենաւային ընկերութեան «Եկատերինա» նաւը։ «Պեստր» շոգենաւը գնում էր ափի մօտով և ձախ նաւեղրի վրա կարմիր լապտեր ունէր, նոյնպիսի լապտեր ունէր և նոյն նաւեղրի վրա «Եկատերինա» նաւը, այնպէս որ երկու շոգենաւերն էլ, կանոնով, պէտք է աջողողը բռնէին։ Նկատելով դիմացը եկող շոգենաւը, «Պեստր», երկիւղ կրելով դէպի ափը յետ մղել նրան, գնաց դէպի բաց ծովը և կարմիր լապտերի փոխանակ բարձրացրեց կանաչ լապտեր։ Ապա երևի, ընդհարումից վախենալով «Պեստր» նաւը կրկին կարմիր լապտեր բարձրացրեց և սկսեց յետ ու յետ գնալ։ Նկատելով այն մանեւրը և նախատեսելով, որ ընդհարումը անխուսափելի է, «Եկատերինա» շոգենաւի կապիտան Օրլով հրամայեց երկար ժամանակ սուլել և հրամայեց յետ ու յետ գնալ։ Բայց դա ոչինչ չօգնեց. «Պեստր» շոգենաւը իր ամբողջ ոյժով խրվեց «Եկատերինա» նաւի ծայրում մօտաւորապէս երեք սաժէն խորութեամբ։ Տեղի ունեցաւ սարսափելի հարուած։ Երբ «Պեստր» սկսեց յետ գնալ, «Եկատերինան սկսեց արագ ընկղմվել ջրի մէջ։ Նրանք բոլորն էլ, որոնք նաւի տախտակամածի վրա չէին, չը կարողացան դուրս թռչել և ամենքն էլ խեղդվեցին։ Չորս նաւատներ սպանվեցին։ Մի կին էլ սպանվեց։ Մի աղջիկ կորաւ։ Խեղդվեց նոյնպէս աղնուական Մ. Ժուրակովսկի, Վարշաւայի առևտրական մի փիրմայի ագենտը, որը Օդեսայից գնում էր Բաթում։ «Պեստր» նաւի վրա սպանվեցին երկու նաւաստիներ։ «Պեստր» շոգենաւի կապիտանն ասաց, թէ ընդհարման ժամանակ ինքը քնած էր։ «Եկատերինա շոգենաւի հետ միասին ջուրը կըլանեց մօտ 50,000 պուդ բեռ ապրանք»։

—

Թիֆլիսի այգեգործական ընկերութիւնը, որ նորերս վերջացրեց մրգերի և ծաղիկների ցուցահանդէսը, իր վերջին նիստում ընտրեց մի յատուկ յանձնաժողով, որ պէտք է կարգի բերի ցուցահանդէսի ժամանակ տեղի ունեցած ժողովի եզրակացութիւնները և ընթացք տայ գործնական առաջարկութիւններին։ Ընկերութիւնը որոշեց կազմել մի յատուկ բիւրո, որ օգնէր դիւղատնտեսներին՝ ձեռք բերելու թէ տեղական կալուածներից և թէ արտասահմանից սերմեր։ Այդ բիւրոյի գլխավարող ընտրվեց Բաղուլովիչ։ Ընկերութեան անդամ Կլաուսէն յայտնեց, որ նա պատրաստ է մի շարք դաւախօսութիւններ կարդալ մրգաբուծութեան և այգեգործութեան մասին։ Շավրով առաջարկեց, որ Ընկերութիւնը բերել տայ Հիւսիսային Ամերիկայից խնձորիների դիմացկուն տեսակներ՝ մեր երկրում բուսցնելու համար։

—

Մեզ ուղարկված է հետևեալ արդարացի նըկատողութիւնը. «Հայ ուսուցիչներից մէկը՝ պ. Տէր-Աստուածատրեանց, որ իր կեանքի լաւագոյն օրերը նուիրել է հայ մանուկների կրթութեան գործին, հոգեկան հիւանդութիւն ստանալով՝ մի քանի տարի է տանջվում է անտէր և զուրկ է որ և է խնամքից։ Մենք տեսնում ենք նախկին ուսուցչին հիւանդութիւնից մաշված, թուլացած, երեխաների ծաղրի առարկայ դարձած, ցեխոտ փողոցի մի անկիւնումն է անցկացնում իր թշուառ կեանքի մնացած օրերը, և բաւականանում ենք միմիայն ցաւակցութեան նման մի բան արտայայտել, կամ շատ-շատ՝ մի սև փող դնել հիւանդի ձեռքը և անցնել։ Բայց դա կատարեալ անբարեխղճութիւն, կատարեալ յանցանք է մեր կողմից։ Ուստի հրաւիրում ենք բարի մարդկանց՝ իրական օգնութիւն հասցնել հիւանդ ուսուցչին, տեղաւորելով նրան քաղաքային նորաբաց հիւանդանոցում, որով ազատած կը լինեն այդ թշուառին փողոցի ցեխերից և զարհուրելի տանջանքից»։

—

Մեր ընթերցողներին յայտնի է, որ կառավարութիւնը վճռեց մտցնել Անդրկովկասում տաւարի ժանտախտի վերաբերեալ օրէնքը։ Առաջին անգամ, փորձի համար, այդ օրէնքը մտցվեց Թուլայիսի նահանգում սրանից երկու տարի առաջ, իսկ անցեալ տարի և Թիֆլիսի նահանգում։ Փորձը տուեց շատ բաւարար և մխիթարական հետևանքներ։ Այդ օրէնքի մտցնելու պատճառով աւելացվում է անասնաբոյժների թիւը մեր երկրում։ Մինչդեռ մի քանի տարի սրանից առաջ անասնաբոյժներ կային միայն նահանգական քաղաքներում, այժմ նրանք գտնվում են բոլոր նշանաւոր շրջաններում, և մանաւանդ մեծ թիւով սահմանագծի կողմերում։ Անասնաբոյժները, բացի ժանտախտին վերաբերեալ իրանց անմիջական պարտաւորութիւնից, ծանօթանում են նաև տեղական մտտեսական և անասնապահական պայմանների հետ, որպէս զի կարելի լինի ապագայում կատարեալ կերպով կազմակերպել անասնաբուժական գործը գաւառներում։

—

Մանուկների խնամատար ընկերութիւնը ձեռնարկել է արդէն բանալու Հալաբարում մանկական տուն՝ ձրի ճաշարանով։ Այդ հաստատութեան մէջ կընդունվեն խնամքի և հոգատարութեան կարօտ բոլոր որբ և աղքատ մանուկները։ Ընկերութեան վարչութիւնը այդ առիթով յայտարարում է, որ ընդունում է ամեն տեսակ նուէրներ—կահ-կարասիք, խոհանոցի ամանեղէն,

---

այսպիսի բան. 6. Հողմ (ուժգին հարեալ) ընդդէմ. Մեծն կ'ըսէ «Հողմոյ ուժգնի հնչեալ». 7. Մինչև պարտեցաւ (բռնակալն). Մեծն չունի այսպիսի բան, այլ կ'ըսէ «Այսու աւրինակաւ եղելոյ պատերազմին պարտման, բռնակալն ընթացեալ» և այլն. 8. (Հատին) զգլուխն. Մեծն կ'ըսէ «Գլուխն հատեալ լինէր». 9. Եւ այնպէս (բարձաւ չարն ի միջոյ). Մեծն չունի այսպիսի բան. 10. Եւ (եղն) խաղաղ(ութիւն զաւրացն և ամենայն աշխարհացն այնոցիկ). Մեծն չունի այսպիսի բան. 11. Ոչ կարաց(եալ զերծանել ի հետամտիցն). Մեծն չունի այսպիսի բան. 12. Սատակեցաւ չարն (չարիւ իւրով). Մեծն չունի այսպիսի բան։ Ուրեմն ի տասներկու ասացուածոցդ Փոքր Սոկրատայ՝ կէսէն աւելին, թիւք 3, 5, 7, 9, 10, 11, 12, արտաքոյ են ընագրի Սքոլաստիկոսին։ Փոխանակ ըսելու թէ Փոքր Սոկրատն առած է զայդոսիկ ի Խորենացւոյ, կարօտն յանկարօտէն, Տ. Խալաթեանց կը հաստատէ թէ Խորենացի առած է ի Փոքր Սոկրատայ, անկարօտն ի կարօտէն. C'est le monde renversé, ինչպէս կ'ըսեն Գաղղիացիք։ Եթէ Խորենացի ընդօրինակեց ի Փոքր Սոկրատայ, ինչպէս չտեսաւ որ երես 480 «խմբեցաւ պատերազմէն քանի մի բառ ետոը հայկաբանութեան չնաշխարհիկ գոհար մի կար, «Հաւասար էր մրցումն և ոչ մի զմի ոք յաղթահարէր», և յերես 481 «Զաւրացեալ եղեն ի վերին զաւրութենէն» բառերէն անմիջապէս յառաջ՝ ուրիշ չնաշխարհիկ գոհար մի «Ոչ անտես լինէր ի խնդրոյն», այլ գրեց «Եւ մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի» (Խոր. Ա. մա. 55), կամ «Եւ ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց» (Գ. մը. 420), կամ «Արք դիպեալ արանց՝ ոչ ոք զպարտութիւն յանձն առնոյր» (Գ. իթ. 455), «Ոչ վրիպեցաւ ի խնդրոյն» (Գ. թ. 415)։ Այսպիսի հմուտ և տեղեակն հայերէն լեզուի՝ հայկաբանութիւն պիտի ուսանէր յանոճ յանարուեստ կակազողէն «Եւ ոչ մի զմի ոք յաղթահարէր», «Զաւրացեալ եղեն ի վերին զաւրութենէն զաւրք թագաւորին. զի Բակուռիոս զաւրավար թագաւորին՝ զաւրացեալ ընթանայր», Բազում մահս առնէր ի թշնամեացն»։

Դարձեալ, եթէ Խորենացի ի նկարագրի Զիրաւայ պատերազմին օգտուեցաւ ի Փոքր Սոկրատայ, յոր Փոքր Սոկրատայ օգտուեցաւ ի գրել անդ զդեղեցիկ նկարագիրս ճակատամարտիցն Հայկայ և Բելայ (Ա. մա. 52—56), Տիգրանայ և Աժդահակայ (Ա. իթ. 121—123), Վաղարշակայ և Մորփիւլիկեայ (Բ. ե. 161—163), Արտաշիսի և Երուանդայ (Բ. խզ. 262—266), Տրդատայ և Բասլայ թագաւորին (Բ. ձե. 355—357), Հայոց և Կովկասայնոց (Գ. թ. 413—416)։ Ստոյդ է որ Արտաշիսի և Երուանդայ պատերազմին նկարագրութեան մէջ առած է ինչ ինչ ի Սուտ-Կալլիսթենեսէ [1]). բայց այս՝ գողութիւն չըսուիր, քանզի գողութիւնն է յափշտակել զօտարին. իսկ Խորենացի—ինչպէս վաղ գրած եմ ի Քննասիրի, Պրակ Երկրորդ, երես 34—«նկատելով զիւր զամենայն թարգմանութիւնս իբր սեղմական ստացուածս, ոչ ինչ խղճած է յեռուլ յայնցանէ պատառիկս բազումս ի Պատմութեան իւրում» այլովքն հանդերձ. և հաւան չեմ Մեծ. Հ. Ցակովբոս Տաշեանի գրածին՝ թէ Խորենացի զ«Ողջ լինել քեզ ընդ ընդ ընդ

հագուստ և այլն։ Նուէրները պէտք է հասցնել վարչութեան նախագահ Ա. Կոլիւբակինին (իւնկէրների դպրոց), իսկ դեկտեմբերի 1-ից ուղղակի ժանկական տունը, Հալաբարում, Մելիք-Բէգլարեանցի տուն և կամ բժշկապետ Ց. Լոռիս-Մելիքեանցին, Դանօվսկայա փողոց, տուն № 21։ Անկասկած, հասարակութիւնը կշտապի օգնել այդ հմակրելի հիմնարկութեան։

—

Զանգեզուրի գաւառի ԱԽԼԱԹԵԱՆ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղի ծխատէր քահանան սրանից մի քանի տարի առաջ ամուսնացրեց 8 տարեկան Ակոբջան Ղուկասեանին, որ մինչև այժմս էլ նոյն երեխայական տիպն է ներկայացնում, ինչ որ էր պսակվելու ժամանակ. անցեալ տարի պսակեց 9 տարեկան Բաղամ Գալստեանին, իսկ այս տարի պսակել է մի 9 տարեկան աղջիկ մի 24 տարեկան երիտասարդի հետ. դարձեալ իր եղբօր աղջկանը, որը 8—9 տարեկան է, պսակել է մի 23 տարեկան երիտասարդի հետ։ Մօտ օրերս պսակեց 10 տարեկան մի երեխայի, Լաչին Խաչատուրեան անունով։ Ո՞վ պիտի այս չարիքի առաջն առնէ»։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Հին-Նախիջևանի և գաւառի 86 նորակոչ հայ զինուորները նոյեմբերի 16-ին ուղևորվեցին Երևան. ամեն մի նորակոչին գիւղական հասարակութիւնների կողմից յատկացրել էին 10 բուբլի փող՝ իբրև նուէր։ Նորակոչները, անշան բացառութեամբ (2 հոգի), բոլորն էլ գիւղացիներ են, իսկ Հին-Նախիջևանը փայլեց իր հիւանդ ու վարակված նորակոչներով, որոնք այդ պատճառով էլ աղաչեցան զինուորական ծառայութիւնից։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐՕՖԷՍՕՐ ԲԷԼՔ

Գերմանացի պրոֆէսօր Բէլքը, որ քիւրդերի յարձակման ենթարկվեց Վանի լճի մօտ, ինչպէս արդէն գիտեն «Մշակի» ընթերցողները, գրել է այդ յարձակման պատմութիւնը։ Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ այդ պատմութեան թարգմանութիւնը ներկայացվել է սուլթանին, որ հրամայեց իսկոյն վարձատրութիւն տալ և թոշակ նշանակել պրոֆէսօր Բէլքին ու բանտարկել յանցաւորներին։ Վարձատրութեան քանակութիւնը որոշված չէ, իսկ թոշակը՝ զուտ թէ Բէլք համաձայնի ընդունել։

Գալով կալանաւորութիւններին, յայտնի քիւրդ Հիւսէյին փաշան մի հեռագիր ուղղելով Զաքի փաշային, հարցրել է, թէ արդեօք յանցաւորներին պէտք է յանձնի վալիին։ Այդ լուրը ցոյց է տալիս, որ Հիւսէյին փաշան մինչև այժմ էլ չէ հպատակվում քաղաքացիական իշխանութիւններին։ Գերմանական և անգլիական դեսպանութիւնները համոզված են, ինչպէս յայտնում է «Times» լրագրի թղթակիցը, որ Բէլքի վրա յարձակվելու գլխաւոր յանցաւորը Հուսէյին փաշան է, բայց սուլթանը պաշտպանում է նրան։

Այժմ մինչ կասէ 300 միլիոն մուսուլմանների բարեկամը...

ԳՆԴԱՊԵՏ ՊԻԿԱՐԻ ԳՈՐԾԸ

—

Դատաստանական այն սխալը, որին զոհ գնաց Դրէյֆուս, այնքան աղետալի էր Ֆրանսիայի համար, որ մի ամբողջ տարի շարունակվող յուզմունքներից յետոյ դեռ էլի նոր և նոր բարդութիւններ են մտցնում երկրի ներքին կեանքի մէջ և ոչ ոք այժմ չէ կարող ասել, թէ Ֆրանսիան երբ կը վերադառնայ խաղաղ դրութեան։ Դրէյֆուսի գործը, այնքան աղմուկներ յարուցանելուց յետոյ, ստացաւ արդարութեան համապատասխանող ընթացք. նրան քննում է վճռաբեկ ատեանը, որ շուտով ցոյց կը տայ աշխարհին, թէ ինչպէս են դատում զինուորական դատաւորները։ Բայց զինուորի կրունկը, որ այնպիսի անվեհերութեամբ կամենում է ճնշել արդարութեան տարրական պահանջները և պահանջում է, որ ամեն ինչ խոնարհվի իր առաջ, այնքան անհամբեր եղաւ, որ նախ քան վճռաբեկ ատեանի հեղինակաւոր վճիռը՝ շտապեց վրէժ հանել իր մի այլ զոհից։ Դա գնդապետ Պիկարն է։ Եթէ չը լինէր այս մարդը, Դրէյֆուսի վերաբերմամբ կատարված անդին անարդարութիւնը երևան չէր գայ և այսօր ամբողջ աշխարհը, բացի Ֆրանսիացի և այլ երկրացի հակասէմիտներից, համոզված չէր լինի, որ զինուորական դատարանը Սեղանի խայտառակութիւնն է մոցրել նաև արդարադատութեան տաճարի մէջ։ Պիկար ոչնչացրեց իր զինուորական ծառայութեան փայլուն ապագան, զրկվեց պաշտօնից, որպէս զի հաւատարիմ մնայ ազնիւ մարդու պարտականութեան և բաց անէ այն բոլոր խարդախութիւնները, որ գործել էին ընդհանուր շտաբում։ Եւ երբ գեներալները տեսան, որ չը նայած իրանց ամբողջ հեղինակութեան, չը նայած իրանց արտասանած սարսափեցնող ճառերին՝ ճշմարտութիւնը յաղթական քայլերով լոյս է գալիս, այն ժամանակ նրանք ձեռք առան իրանց պարտութեան գլխաւոր պատճառին, և Պիկար զինուորական բանտ նետվեց։ Դաղտնի քննութիւն, խստութիւններ բանտարկվածի նկատմամբ—զինուորական վարչութիւնը այս միջոցներով ուզում էր ցոյց տալ, թէ ինքն էլ արդարադատութեան պահանջները կարող է կատարել, միանգամայն մոռանալով, որ զինուորական դատարանը Դրէյֆուսի գործով այնպիսի հարուած է տուել իր հեղինակութեան, որ այլևս չէ կարելի նրան հաւատալ, իբրև մի անկախ, անաչառ և արդարադատ ատեանի։

Պիկարի գործը Դրէյֆուսի գործի հետ կապված է սերտ կերպով։ Եթէ զինուորական վարչութիւնը իրան մի առանձնաշնորհված կաստա չը համարէր, նա անշուշտ կը յայտնէր երկրի բարձրագոյն ատեանի — վճռաբեկ դատարանի հեղինակութիւնը և կը սպասէր, որ այդ դատարանը վերջացնէր իր սկսած քննութիւնը։ Բայց Պարիզի զինուորական նահանգապետ գեներալ Ցուրլինդէն հրաման տուեց, որ Պիկար զինուորական դատարանի առաջ հանվի նոյեմբերի 30-ին։ Այս վճիռը այնքան անակնկալ էր Ֆրանսիայի համար, որ սկսվեցան բողոքներ։ Միտինգներ գումարվեցան, մի մեծ հանրագիր կազմվեց, որին ստորագրել են Ֆրանսիայի նշանաւոր գործիչներից շատերը. պահանջում էին, որ Պիկար աղատվի բանտարկութիւնից, իսկ նրա գործը յանձնվի վճռաբեկ դատարանին։

Այդ մտքով նոյեմբերի 16-ին հարցապնդում եղաւ և պատգամաւորների ժողովում։ Դահլիճը ծայրէ ծայր լիքն էր։ Ներկայ եղողների մէջ կային ռուսաց և իտալական դեսպանները, Օրլէանեան պրինցը, ընդհանուր պրոկուրոր Մանօ։ Արմատական պատգամաւոր Բօս մի խիստ ճառ արտասանեց։ «Պիկարին ձերբակալել են, որպէս զի չը թողնեն նրան խօսել. ամբողջ երկիրը կամ գոնէ նրա լաւագոյն մասը համաձայն է այս բանի մէջ»։ Խիստ յարձակումներ գործելով գեներալ Ցուրլինդէնի դէմ, Բօս վերջացնում է իր ճառը հետևեալ խօսքերով. «Ես չեմ պահանջում որ կառավարութիւնը ոչնչացնէ Պիկարի գործը, այլ միայն պնդում եմ, որ այդ գործը յետաձգվի, մինչև որ կը վերջանայ Դրէյֆուսի գործը»։

Աւելի նշանաւոր էր այն ճառը, որ արտասանեց Պուանկարէ, որ մինիստր էր 1894 թվին, երբ դատապարտվեց Դրէյֆուս։ Նա ասաց. «Ես ենթադրում եմ որ այժմ մեղանից շատերի համար վախկոտութիւն կը լինէր լռելը։ Ես, ինչպէս գիտեն ամենքը, երկու տարի աշխատում էի իմանալ ճշմարտութիւնը Դրէյֆուսի գործի մէջ։ Այսօր վերջին փորձերն են անում, որ թոյլ չը տան բաց անելու զինուորական մինիստրութեան մէջ կատարված զեղծումները։ Ինձ համար օտարոտի է, որ մի և նոյն օֆիցէրին երեք անգամ ենթարկում են երեք զանազան զինուորական դատարաններին և իրաւունք եմ համարում ասել՝ որ այդ հալածանքը վրիժառութեան տպաւորութիւն է թողնում։ Ես իրաւունք եմ համարում ասել՝ որ Պիկարին ամեն կերպ աշխատում էին ոչնչացնել մերթ քօղով ծածկված կնոջ, մերթ կեղծ հեռագիրների միջոցով։ Այդ մեքենայութիւնները անպատիժ մնացին. Էստերհազիները և Պատի-դը-Կլամները ազատ ման են գալիս։ Այս բոլորի մէջ կայ մի բան, որ վրդովեցնում է նոյն իսկ ամենանանդգիստ մտքերը։ 1894 թվին ես գտնվում էի այն մինիստրութեան մէջ, որի ժամանակ տեղի ունեցաւ Դրէյֆուսի գործը։ Ես, ինչպէս և իմ ընկերակիցներից շատերը, միայն լրագիրներից իմացայ, թէ Դրէյֆուս կալանաւորված է»։

Շարունակելով իր խօսքը, ատենաբանն ասաց. «Հասել է ժամը, երբ ամեն մէկը, որ ճշմարտութեան մի կոտոր է իմանում, պիտի խօսէ։ 1894 թվի մինիստրներին երբէք յայտնի չէին Դրէյֆուսի յանցանքը հաստատող փաստեր, բացի բօրդերոյից։ Ես երբէք չեմ լսել դաղտնի թղթերի մասին, նոյնպէս և այն՝ թէ Դրէյֆուս խոստովանել է իր յանցանքը»։

Մինիստր Դիւպիւի կառավարութեան կողմից յայտնեց, որ եթէ վճռաբեկ դատարանը պահանջէ Պիկարի գործը, այդ պահանջը կը կատարվի, բայց կառավարութիւնը յանձն չէ առնում իր իշխանութեամբ վերցնել գործը զինուորական դատարանից։ Այդ յայտարարութիւնն ընդունվեց պատգամաւորների ժողովի կողմից, այնպէս որ այսուհետև վճռական խօսքը պատկանում է վճռաբեկ ատեանին։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ուրմի, նոյեմբերի 2-ին

Պաշտօնական անձանց հետ մենք ևս այցելեցինք Բարանդուզ գաւառը, որի բնակիչները թուրքերէն են խօսում՝ հայերէն չը գիտենալու պատճառով։ Մենք ևս հաստատում ենք այն բոլորը, ինչ որ արդէն տպված է «Մշակի» մէջ այս տեղերի վերաբերմամբ։ Ժողովրդի մեծամասնութիւնը աղքատ է և յետին ծայր թշուառ. շատերի տանը մի բուռ ցորեն անգամ չը կայ. աւելացրէք դրա վրա, որ ցորենի գինը քանի գընում՝ թանգանում է. մի բեռն այժմ արժէ 9—10 թուման (10 պուդը 18—20 բուբլի)։ Ի լրումն ամենայնի յիշենք և պարսիկ խաների հարստահարութիւնները և այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչու ժողովուրդը պատրաստվել է կրօնափոխութեան դիմելու, յուսալով, որ դրանով բացի պաշտպանութիւն գտնելուց, փող էլ կըստանայ։ Իսկ հայոց հոգևոր իշխանութիւնն այսպիսի ժամանակ պաշտօնապէս հրամանագրում է Ուրմիի հայոց առաջնորդարանին՝ «պղտին» հաւաքել... Դատեցէք, ընթերցող. օտարը ժողովրդին պաշտպան հանդիսանալով, փող բաժանելով և դպրոցներ բանալով, հազարներով մարդիկ է կորզում մեր եկեղեցուց, իսկ մեր եկեղեցու պաշտօնեաները փոխանակ օտարի այդ զէնքի դէմ գործադրելու նոյնանման զէնք, դեռ փող են պահանջում ժողովրդից, այն էլ այս կրիտիկական բօպէներում։

Այս է իրերի վիճակը։ Ժողովրդին օգնելու միջոցներից մէկն էլ դպրոցներ բանալն է (մի կօպէկ անգամ ծախս չը պատճառելով գիւղացուն), որի համար անձնուիրաբար աշխատում են 2—3 հոգի. բացված են 3 դպրոց՝ մէկը քաղաքում, մէկը Գեարդաբաթ գիւղում, մէկն էլ Նախիջևանթափա գիւղում։ Երեքն էլ շուտով կը բացվեն Բարանդուզում, որոնցից 2-ը բացում է Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը, իսկ մէկն էլ իր ծախսով բացում է մի ուրիշ բարեգործ։ Ընտրված են երեք կենտրօնական գիւղեր՝ Բաբարի, Դիզաթաքեա և Թուսաթար, որտեղ և պէտք է բացվեն դպրոցները։ Ցիշեալ 2 գաւառներում (Ուրմիի և Բարանդուզի) անհրաժեշտ է լրացնել պակասը, բացելով էլի 6 դպրոց՝ Ռանվա, Իսալու, Իքիազէջ, Բաղլբու, Կարակզ և Դարբաղի գիւղերում։ Երեքն էլ անհրաժեշտ է բացել Սուլդուզի, Միքիւրիի և Միանտապի գաւառներում, իւրաքանչիւրում մէկ-մէկ հատ. այդ դպրոցների համար յարմար տեղերն են՝ Նաղադէ, Դարալաք և Թաղիապատ։ Նաղադէի դպրոցի համար պէտք է կազմուի պատասխանատու հոգաբարձութիւն տեղական աղսակալներից, եթէ ոչ խառնակիչները նորից կը փակեն դպրոցը, ինչպէս որ 2 անգամ փակել են։ Թէ ուսուցիչների վարձը և թէ դպրոցներին վերաբերեալ բոլոր ծախսերը, ինչ ասել կուզի՝ պէտք է հոգան բարեգործները։ Չը պէտք է ծանրանալ ժողովրդի վրա, ընդհակառակը պէտք է աղատել նրան կործանիչ վտանգներից՝ սովի ճանկերից, պարսիկ խաների հարստահարութիւններից և խաւարի մէջ խարխափելուց։ Այս միջոցներին դիմելուց յետոյ հաստատապէս կարելի է ասել, որ ժողովուրդը

թարգմանութիւն է քան զՄեծ Սոկրատայն «Ընտանի սրով յանձն հպեցաւ», բայց Փոքր Սոկրատն ուսած է զայն ի Փարպեցւոյ, երես 160, երկրորդ տպագրութիւն. «Կամէին յառնել և ընդ ինքեանց սուրն (սուրս ?) ելանել» [2]։ Իսկ ի նմին 483 երեսի, վերջին տող, «Մի զոք խուել և մի զոք զրպարտել», որ և այս չկայ ի բնագրի Սքոլաստիկոսին, յԱւետարանէ է, ինչպէս պիտի տեսնենք։

Տ. Խալաթեանց պարտէր գիտել նմանապէս՝ որ Խորենացի առած է պէսպէս ասացուածս ի Սուրբ Գրոց, բայց չափով և ըստ պատշաճի, ինչպէս մեր ամենայն ընտիր մատենագիրք, նոյն իսկ Ոսկեդարեանք։ Դիտենք ի վկայութենէ Փարպեցւոյ, որ մեր Հինգերորդ դարու երանելի Վարդապետքն՝ զամենայն Կատակարանս Եկեղեցւոյ երիցս և չորիցս կ'ուսուցանէին իւրեանց աշակերտաց ի սկզբանէ մինչև ի կատարած գրոցն, և կը պահանջէին, որ

[2] Այս գեղեցիկ ոճ, որչափ ես դիտեմ, առաջին անգամ գործածուած է ի Խորենացւոյ գիրս Պիտոյից, Թ. դ. 542. «Մինչ զի ոմանք ընդ իւրեանց իսկ ելանէին սուրս»։ Ի Պիտոյից գրոց անցած է ի Փարպեցի, և ի Պատմութիւն Սեբէոսի (տպ. Պեսբրուրգի, երես 59). «Եւ ոմանք ընդ իւրեանց (տպ. ընդ իւրեանս) իսկ սուրս ելանէ»։ Ի Փարպեցւոյ անցած է ի Փոքր Սոկրատ։ Մակաբայեցւոց գրոց մէջ կայ «Ընդ իւրեանց զէնս ելանէին». Բ. Ժ. 22։ Կայ և «Ելանել ընդ սուրն» յՈսկեբերանի մեկնութեան Ա. Տիմոթեայ, Զ. Յորդորակ, երես 52։

Դաւթի սաղմոսարանին պէս բերնուց արտասանեն [1])։ Զարմանք չէ որ զբովանդակ Աստուածաշունչն ի բերան դիտող Խորենացին՝ ի նկարագրի Զիրաւայ պատերազմին հատուածիկ մի յիշած ըլլայ ի գրոց Մակաբայեցւոց և խառնած ընդ իւր սեպհական բանս. ոչ զարմանք է՝ եթէ անգիտակցաբար ըրաւ զայն, և ոչ ամօթ՝ եթէ ըրաւ գիտակցաբար.—«Ի փախուստ դարձուցանէր»-ն (տես ի վեր անդր թիւ 4), որ կայ ի բաղում յայլ տեղիս Խորենացւոյ (Բ. և. 163. հբ. 323. հղ. 332, և այլն) [2]) և զոր Տ. Խալաթեանց կ'անդիտանայ, նոյնպէս ի Մակաբայեցւոց է (Ա. և. 43. դ. 15, և այլն [3]), թէպէտ կը գտնուի և յայլ պատմական գրութիւնս Ոսկեդարու.—«Եւ խրժբեցաւ պատերազմն» (տես ի վեր անդր թիւ 1) է յԱռաջին գրոց Թագաւորաց, Դ. 2.—«Ի վերին աւգնականութենէն» (տես ի վեր անդր թիւ 3) է յՈսկեբերանի մեկնութենէն Եսայեայ, երես 185, ուր Փոքր Սոկրատն կ'ըսէ «Ի վերին զաւրութենէն»։ Խորենացի կարօտ չէր զայս ամենայն ի փցուն թարգմանչէն Փոքր Սոկրատայ ուսանելոյ, ինչպէս և ոչ զթիւն 10, «Եւ յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ», և ոչ իսկ զթիւն 11, «Բայց ամբարշտին Մերուժանայ վիրաւորեալ ձին, ոչ կարաց երագել ընդ փախստեայսն». քանզի երկու յետինքս Խորենացւոյ յատուկ են, թէպէտ զայս ևս կ'անդիտանայ Տ. Խալաթեանց. տես զառաջինն (Բ. և. 163). «Եւ յայնմ հետէ դաղարեալ խաղաղէր երկիրն, նուաճեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ». տես զերկրորդն (Բ. հմ. 338). «Ցորում և Տրդատայ վիրաւորեալ երիվարն, ոչ [կարաց] աճապարել ընդ փախստեայսն»։

(Կը շարունակվի)

Նորայր Ն. Բիւզանդացի

Ց. Գ. Ա յօդուածիս մէջ («Մշակ», 23 Հոկտ., առաջին երես, երրորդ սիւնակ, տող 15,) փոխանակ «արժանաւոր»՝ ընթերցիր «արժանահաւատ»։—Գ յօդուածիս մէջ (28 Հոկտ., առաջին երես, երրորդ սիւնակ, տող 11,) փոխանակ «հայրենագէտն»՝ ընթերցիր «հայերէնագէտն»։ Նոյն սիւնակ, տող 24, փոխանակ Marsikus ընթերցիր Marsicus. Երկրորդ երես, երկրորդ սիւնակ, տող 19, փոխանակ «հատուածներ ու օգնութիւն»՝ ընթերցիր «հատուածներու օգնութիւն»։ Զորս կամ հինգ ուրիշ տպագրական թեթև վրիպակաց վերայ խօսել չարժեր։ Երրորդ երես, երրորդ սիւնակ, ծանօթութիւն 1, ուր կը յիշուի Գրիգոր՝ որդի Աբասայ, հարկ է աւելացնեմ, որ մատենագրիս և իր Պատճառ լայն

եւ նուրբ գրեանց ընդարձակ գործոյն վերայ լիուլի կը տեղեկացընէ Հ. Ց. Տաշեան յիւր պատուական և բազմաչխատ երկասիրութեանն Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, թիւ 47, երեսք 213—233։ Այս Գրիգորի որդւոյ Աբասայ ստոյգ ժամանակն յայտնի չէ ինձ։ Հ. Տաշեան, անդ, երես 224 բ, կը հաստատի յետ 869 կամ 880 թուականին։ Կը յիշուին Թաւրայ և Տէր Ներսէս յերես 225 ա, (անշուշտ Թէոդիանէ և Շնորհալի). կը յիշուին Դաւիթ Քոբայրեցի (ԺԲ դար) և Գոշ (Մխիթար?) յերես 224 ա։ Տես և զռամկաբանութիւնսն «զոր և Սոկրատն այլ կու ասէ... մինչ կու երթային ի տուն եպիսկոպոսացն» և այլն, յերես 228 ա։

Դ. յօդուածիս մէջ, թիւ 2, ուր կ'ըսեմ թէ Փոքր Սոկրատն զ«Նունի, յընկերաց Սրբոյն Հռիփսիմեայ» առած է ի Խորենացւոյ (Բ. ձզ. 358), գիտելի է որ նաև այլուր կը զրէ Խորենացի, Բ. զա. 376—377. «Կին ոմն՝ անուն Մանի, յընկերաց Սրբոյն Հռիփսիմեայ, որպէս զՆունի Վրաց վարդապետուհի»։ Զայս վկայութիւն Խորենացւոյ պարտ է յաւելուլ նաև ի շարունակութեան նոյն յօդուածիս, թիւ 8. ուր և միտ դնելու է, որ Խորենացի եթէ զԱռաքելուհի բառն ի Փոքր Սոկրատայ առած ըլլար, չէր գրեր «Զոր համարձակիմք ասել՝ Առաքելուհի եղեալ (Վրաց)»։ Առաքելուհի և Վարդապետուհի՝ երկոքեան ևս Խորենացւոյ են։

Ն.

հաւատափոխ չի դառնայ. իսկ եթէ անյապաղ չեն դիմի այս միջոցներին, հայոց հոգևոր իշխանութիւնը և իրանք իրանց ժողովրդի բարեկամ հռչակողները, որոնք գիտեն միայն ոլիմպիական բարձրութիւնից խօսել, թող հաստատ հաւատացած լինեն, որ մի քանի ամսից յետոյ յիշեալ հինգ գաւառներում չի գտնվի և ոչ մի լուսաւորչական հայ...

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սուլթանը, իբրև վերջին փորձ, դիմեց հեռագրով ռուսաց Կայսրին, խնդրելով խափանել Դէօրգի իշխանի նշանակումը: Կ. Պոլսից հեռագրում են, նոյեմբերի 17-ից, որ անուղղակի ճանապարհով, բացառական պատասխան է տրվել սուլթանի միջնորդութեան:

—Վերջերս եւրոպական մամուլը անգին աղմուկ բարձրացրեց, թէ Անգլիան հողային նոր գրաւումներ և յափշտակութիւններ է կատարել Չինաստանում: Իբր կատարված իրողութիւն, հաղորդվեց, որ Անգլիան գրաւել է Զուսանի կղզիները. այդ գրաւման շնորհիւ Սիբիրի մեծ երկաթուղու նշանակութիւնն ընկնում է: Զուսանի արքիպելագը բաղկանում է բազմաթիւ կղզիներից, գեղեցիկ կերպով մշակված է, շատ նաւահանգիստներ ունի և մօտ 200 հազար բնակիչ: Նա ներկայացնում է աշխարհագրական և ռազմագիտական կարևոր կէտ: Սակայն այժմ լրագիրները հաղորդում են, որ այդ լուրը վաղաժամ է և ճիշդ չէ. Անգլիան դեռ չէ գրաւել, բայց նա գերակշռութեան իրաւունքը իրան է վերապահում, եթէ երբ և իցէ մի պետութիւն կամենայ գրաւել այդ կէտը:

—Անարխիստների դէմ գործող կոնֆերէնցիայի նիստերը, ինչպէս յայտնի է, բացված են: Այդ առիթով «Standard» լրագիրը հաղորդում է անգլիական կառավարութեան կարծիքը՝ անարխիստների դէմ ձեռք առնվելի միջոցների մասին. «Որպէս զի Անգլիան էլ հաւանութիւն տայ անարխիզմը ճնշելու միջազգային ծրագրին՝ հարկաւոր է մի պայման. այդ ծրագիրը չը պիտի անհամապատասխան լինի ազատութեան սկզբունքներին և չը պիտի քաղաքական վրէժխնդրութեան մի միջոց դառնայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աստուածաշնչից գիտենք, որ Սողոմոնի ժամանակ Արաբիայում Սաբա անունով մի հռչակաւոր թագուհի կար, որ ահագին քանակութեամբ ազնիւ փայտեղէն նիւթ ուղարկեց Սողոմոնին՝ տաճարի շինութեան համար: Այժմ, ինչպէս հաղորդում են եւրոպական լրագիրները, Արաբիա է ուղարկվում չվեդ-աւստրիական մի գիտնական արշաւախումբ՝ Սաբա թագուհու տիրապետութեան երկիրներն ուսումնասիրելու համար: Բազմաթիւ գիտնականներ մասնակցում են այդ հետաքրքրական ուսումնական արշաւանքին: Ճանապարհորդութիւնը կը տեւի վեց ամիս, և որովհետև արշաւախումբը պէտք է անցնի անջրդի տեղերով, ուստի ենթադրութիւն կայ վերցնել խմելու ջրի մեծ պաշար ուղտերի վրա բեռնած:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՕԴԷՍԱ, 25 նոյեմբերի: Ստացված տեղեկութիւններից երևում է, ու «Եկատերինա» նաւը ընդհարվելով «Պեսարա» շոգենաւին՝ 10 րօպէից յետոյ ընկղմվեց ջրի մէջ: Խեղդվեցին 6 հոգի՝ 2 կին և մի աղջիկ, բացյանը և երեք նաւապետ «Եկատերինա» նաւից:

ՊԱՐԻԶ, 25 նոյեմբերի: Դէրուլէդի նախագահութեամբ տեղի ունեցած հակասեմիտական ժողովից դուրս գալու ժամանակ նացիոնալիստները՝ չը նայելով ոստիկանութեան դիմադրութեան, գնացին Բանկ փողոցը, ուր վերաբերմունքի կողմնակիցները դուժարվել էին մի դահլիճում: Դահլիճում հաւաքվածները աշխատում էին դուրս գալ, որի ժամանակ սարսափելի տուր ու դփոց սկսվեց: Դահլիճում լսվեցին հրացանաձգութեան ձայներ: Ոստիկանութիւնն չտապեց ներս մտնել դահլիճ և դուրս բերեց մի վիրաւորվածի: Վիրաւորված է և մէկ ոստիկան: Երկու ուրիշ պոլիցիականներ նոյնպէս վիրաւորվեցին կռվի ժամանակ:

ՀՌՈՄ, 25 նոյեմբերի: Պատգամաւորների ժողով: Կրետէի ժամանակաւոր վարչութեան համար մէկ միլիոն լիրա փոխ առնելու հարցը քննելու ժամանակ Կանէվարո, պատասխանելով զանազան հռետորների առարկութիւններին, ասում է, որ չը նայելով իր համեստ քովանդակութեանը, օրինագիծը նպատակ ունի պաշտպանել Իտալիայի շահերը Միջերկրական ծովում: Սխալվում են, երբ ասում են, թէ այդ օրինագիծը Իտալիայի երևակայական յաղթութիւնն է ցոյց տալիս, այն ինչ՝ դա իսկապէս Ռուսաստանի յաղթութիւնն է: Խօսքը քաղաքակրթութեան յաղթութեան մասին է. մի գործ, որ կատարել են չորս հովանաւորող-պետութիւնները, որոնք գործում են կատարեալ համաձայնութեամբ և անվիճելի ազնուութեամբ: Արքայորդի Դէօրգիի թեկնածութիւնը, յիրաւի, առաջարկել է Ռուսաստանը, բայց անկեղծ կերպով քաջալերութիւն է գտել մնացած պետութիւններից, որոնք այն համոզմունքի եկան, թէ այդ թեկնածութիւնը քրիստոնեաների հանդուրժողութիւնը կը գրգռի կղզու ներսում,—իսկ այդ վերջինը այն նպատակն էր, որին դիմում էին պետութիւնները:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 25 նոյեմբերի: Իր հրավարտակի մէջ Մակ-Կինլէյ խօսում է Միացեալ-Նահանգների մշտական զօրքի զինաթափութեան մասին, և ասում է, թէ նա յայտնի կերպով պակաս է այն պետութիւնների զօրքերից, որոնց Ռուսաց Կայսրը դիմեց իր հրաւէրով, և թէ այդ հարցը Միացեալ-Նահանգների համար գործնական նշանակութիւն չունի: Ցամենայն դէպս—շարունակում է նախագահը,—Ռուսաց Կայսրի առաջարկութիւնը լաւ նշան է՝ ազգերի յարաբերութիւնները բարւոքելու համար: Այդ տեսակէտից Միացեալ-Նահանգները պէտք է նրան աջակցութիւն ցոյց տան:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 24-ին

Լոնդօնի վրա 10 ֆունտ արժէ	93	ր. 75 կ.
Բերլինի վրա 100 մարկ „ „	45	„ 67½ „
Պարիզի վրա 100 ֆրանկ „ „	37	„ 10 „
Պոլուիմպերեալ	—	„ — „
Մաքսային կուպոնները	—	„ — „
Հօրասային դէնգիա	6	„ 7½ „
4% պետական ընտեսա	100¾	„ — „
4% Ներքին փոխառութեան	100½	„ — „
3½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	95⅜	„ — „
4½% վիկտոր. գիւղ. հող. բանկի	100½	„ — „
Ներքին 5% առաջին փոխառութ.	297	„ — „
Նոյնը „ երկրորդ —	258	„ — „
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի.	218	„ — „
5% պետական երկաթուղ. ընտեսա	—	„ — „
Պետերբ. քաղ. կր. ընկ. օբլ. 5%	—	„ — „
Մոսկվայի քաղաք. կր. օբլիգացիաներ.	100½	„ — „
Օդէսայի — —	100¼	„ — „
Թիֆլիսի — —	—	„ — „
Թիֆլիսի կալ. բանկի 6% —	—	„ — „
Նոյնը — — 5% —	99¾	„ — „
Քուրսկայի կալ. բանկի. 6%	101⅛	„ — „
Նոյնը — — 5%	100	„ — „

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ յերեկվայ 4 ժամին և 15 րօպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րօպէին: տուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րօպէին. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րօպէին:

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րօպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րօպէին: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րօպէին. Բաթում է հասնում առաւօտեան 7 ժամին:

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 30 րօպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րօպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 15 րօպէին. Բաթում է հասնում երեկվայ 12 ժամ 59 րօպէին:

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րօպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 րօպէին: ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րօպէին. Բաթում է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րօպէին:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մանուկաբ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1¼—2¼ ժ. ներքին և միասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Ն. ՇԳԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մէզի, խիլ, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Հանախորդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերատեսուչ՝

55—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐ՝

մասնագիտաբար բգի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններով:

Առաւօտեան 9—12 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.

Գօլովինսկի պրոսպ. № 28, տ. Աղամովի:

2—15

ЖЕНЩИНА-ВРАЧЪ

В. І. АНТУШЕВИЧЪ

Практикуетъ въ г. Елисаветполѣ. Пріемъ больныхъ ежедневно отъ 10 до 12 часовъ дня. Набережная рѣчки Ганжинки, д. Ерицпохова, рядомъ съ домомъ Директора гимназіи.

(ո. ե. հ.) 4—10

ԼՈՒՄԱՑ

ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Վէպ Թիֆլիսի կեանքից:

ԳԻՆՆ Է 60 Կ.

Վաճառվում է Թիֆլիսում՝ Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցներում: Դիմել ուղղակի այդ գրավաճառանոցներին:

8—10

Վրաստանի եւ Իմերէթի

ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՑԻ ԱՏԵՆԻ մէջ նշանակված է ամուրդ սոյն նոյեմբերի 27-ին առանց կրկնամրդի՝ կապալով տալու եկեղեցական կղզին, որ գտնվում է Վանաց աւագ եկեղեցւոյ հանդէպ: Մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն սահմանեալ գրաւական, իսկ պայմանների հետ կարող են ծանօթանալ կոնսիստորիայի դիւանատանը:

Անդամ կոնսիստորիայի՝

3—3 Գրիգոր աւագ քահ. Տէր-Բարսղեանց

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է ժողովրդական նիւթեր հաւաքողներին, որ Ընկերութիւնս այսուհետև հրատարակելու է միայն այնպիսի ժողովրդական նիւթեր, որոնք բաւականաչափ մշակված են և առանձին խմբագրութեան կարօտ չեն: 3—3

1870 թ. մարտի 27-ին ԲԱՐԶՐԱԳՈՅՆ հաստատված

Առեւտրական-Ապահովագրական Ընկերութիւնը

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

Ապահովագրութիւն { կրակից—ամեն տեսակ շարժական և անշարժ ստացուածքների: ապրանքներ տեղ հասցնելու—գետերի, ծովերի վրայով և ցամաքային ճանապարհով:

Ապահովագրութիւն՝ կեանքի, դրամագլուխների և եկամուտների: Կանոնները, պայմանները, գրաւոր և բերանացի բացատրութիւնները կարելի է ստանալ Թիֆլիսում գլխաւոր գործակալ Ֆէօդոր Ալէքսանդրովիչ Իվանովի գրասենեակում, Սօլոլակ, Սադովայա փողոց, տուն № 64, Տելեֆոն № 345, Նահանգական վերատեսուչ Վիտալի Դիոնիսովիչ Անդրժեյկովիչից, Վօզնեսենսկայա փողոց, տուն № 16 և Ընկերութեան Վարչութեան մէջ Մոսկվայում, Նիկոլսկայա, տուն Բոստանժօգլօ, ինչպէս նաև Ընկերութեան գործակալների մօտ ռուսաց կայսրութեան քաղաքներում: (ե. հ. չ.) 2—10

ՆՈՐ ԲԱՑՎԵՑ

Կ. ԶՈՒԼԻԱՆԵԱՆԻ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ԵՒ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(ե. հ. չ.) Սադովայա փողոց, № 38, միջին յարկ: 5—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 25 նոյեմբերի (7 դեկտեմբերի) ՄԻՆԴԻԼԻ՝ շոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլղարեանին, Կոլիբեակինսկայա հրապարակ: ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենրոդերին: (ե. հ. չ.) 5—20

ՎԱՃԱՌԱՀԱՆՎԵՑ ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

ԵՐԿՐՈՐԴ, ՆՈՐԻՑ ՄՇԱԿՎԱԾ ԵՒ ԼՐԱՑՐԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ, 3 Ր. 70 ԿՕՊԵԿ

2-ое вновь обработанное и дополненное изданіе

ЛИТЕРАТУРНО-НАУЧНАГО СБОРНИКА

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ".

Въ настоящее удешевленное изданіе, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣдствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ. Къ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 человѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Требизондѣ 1895 г." И. К. Айвазовскаго и „Весенняя буря" Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р., съ пересылкой 3 р. 70 к.

Складъ въ конторѣ *Русскихъ Вѣдомостей* и въ книжн. магаз. Карбасникова на Моховой.

NB. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію «Братской помощи», благоволятъ поспѣшить окончаніемъ таковыхъ.

Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли сборника, перепечатать настоящее объявленіе.

5—10 Завѣд. ред. Гр. Джаншіевъ

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Ноября 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Меликъ. ул. № 13.